ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱԶԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/1048/02/24**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի փետրվարի <<13>>-ին (ք. Երևան)

Ծանոթանալով «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊ ընկերության (պետական *գրանցման համարը՝ 4, ՀՎՀՀ՝* 02574465, *գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան,* ԿԵՆՏՐՈՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ, շենք 16, 1/1, *Էլ. փոստ՝* Lawyer@armeniainsurance.am, *այսուհետ նաև՝ Հայցվոր)* ընդդեմ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀՄԴ-ի *(գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան,* ԿԵՆՏՐՈՆ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, շենք 17, *Էլ. փոստ՝* s.avetisyan777@gmail.com, aspu.am@aspu.am, *այսուհետ նաև՝ Պատասխանող),* երրորդ անձ (ինքնուրույն պահանջ չներկայացնող) «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊ ընկերության *(գործունեության վայրի հասցե՝*

ՀՀ, ք. Երևան, ԱՐԱԲԿԻՐ, ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ, շենք 116/1 ԵՎ 116/5, *Էլ. փոստ՝* nairi@imnairi.am*)* ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի կարիքների համար ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով առողջության ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2014թ. Արձանագրություն N 3-ի 1.2 կետով կայացված՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու, 2.2. կետով կայացված՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ԻՆ ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման ընտրված մասնակից ճանաչելու, 3-րդ կետով կայացված՝ ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու որոշումները, ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգով պայմանագիրը կնքելու մասին որոշման մասին հայտարարությունը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀՄԴ–ի ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի կարիքների համար ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով առողջության ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2014թ. Արձանագրություն N 3-ի 1.2 կետով կայացված՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու, 2.2. կետով կայացված՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ԻՆ ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով գնանշման հարցման ընտրված մասնակից ճանաչելու, 3-րդ կետով կայացված՝ ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու որոշումները, ՀՊՄՀ-ԳՀԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգով պայմանագիրը կնքելու մասին որոշման մասին հայտարարությունը անվավեր ճանաչելու պահանջի մասին ։

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային համակարգով մակագրվել են 08.02.2024 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով և 11.1-րդ գլխով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Թիվ ԵԴ2/1048/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024 թվականի մարտի 27-ին:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Digitally signed by
ATANESYAN ANI 5101901431
Date: 2024.02.13 16:58:22
AMT